




Տարեկան գինը 10 ռուբլի: Կէս տարեկան 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Маска».
Կամ Tiflis, Rédaction «Maschak».
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բաց: կիրակի եւ ք...):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր տողականին 10 կոպէկ.
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ի Ս Ա Ն Ա Վ Մ Ի Ր Ա Ք Ե Ա Ն Ի

մահվան քառասունօրեակի առիթով, կը մատուցվի պատարագ եւ այլապէս հոգեհանգիստ:
Պատարագը կը անվարձ ժամի 10 1/2-ին, իսկ հոգեհանգիստը 11 1/2-ին:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Ղեւնդ Ալիշան.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Պարտադիր կարգադրութիւն Թիֆլիս քաղաքի համար. Հ. Ալիշան իբրեւ բանաստեղծ. Հ. Ալիշանի աշխատութիւնները. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՐԵՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ. Ղ. Ալիշանի գլուխ գործոցները:

ՂԵՒՈՆԻ ԱԼԻՇԱՆ

Այսօր լրացաւ հայր Ղեւնդ Ալիշանի թաղման եօթներեակը:
Ղեւնդ Ալիշանի մահը ընդհանուր վիշտ պատճառեց մեր հասարակութեան գրական շրջաններում: Դէպի Վենետիկի ու Ղազարի վանքը տեղացի ամեն կողմից հեռագիրներ՝ յայտնելու ցաւակցութիւն միաբանութեանը և յարգանք նշանաւոր հանգուցի աշխիշատակին:
Մեր ժամանակակից սերունդը այն օրից, երբ նա սովորել է թուրքի լեզուի հայ լեզուն և ծանախել հայ մատենագրութիւնը, լսել է Ալիշանի անունը թէ իբրեւ բանաստեղծի և բանասէրի և թէ իբրեւ պատմագրի, աշխարհագրի, հնախօսի, բանահաւաքի և խմբագրողի: Ութսունամեայ ծերունին ողորդած և ժրաշան գործունէութեան մի հազուադէպ:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

Ղ. ԱԼԻՇԱՆԻ ԳԼՈՒԽ-ԳՈՐԾՈՑՆԵՐԸ

«Այնպէս սիրեմ և համարեմ զայլքինս՝ որպէս ի մանկութեանս զհայր կամ զմայր»:

Ղ. ԱԼԻՇԱՆ

Պատկանելի եւ պաշտելի ծերունին, Ղեւնդ Ալիշանը, ոչ միայն մեր փոքր ազգի, այլ եւ եւրոպացի գիտնականների մէջ մեծ յարգ էր վայելում՝ իբրեւ աշխարհագրագետ, հնագէտ եւ պատմագէտ: Փառք-Առիթի եւ Հայաստանի վերաբերեալ պատմա-աշխարհագրական հարցերում նա հեղինակութիւն էր, որին զիւրում, կարծիք հարցնում եւ հետեւում էին այնպիսի հռչակաւոր գիտնականներ՝ ինչպէս Կիպլեր, Շանար եւ ուրիշները:
Ուսումնասիրութեան անյաջ տենչ, հայրենիքի անհուն սէր եւ վաթսուներեակ տարիների միապադառն, անվերջ աշխատանք՝ խցի չոր պատերի մէջ, գրեթե չընկալուած.— միացրէք այս երեք տարրերը, եւ արդիւնքը կը լինի մի գրական հսկայութիւն, որ մարմնավորված էր Ղ. Ալիշանի մէջ: Նրա աշխատութիւններից մի ամեն է միայն տպագրված, կարելի է ասել՝ փոքր մասը. բայց այս փոքր մասն ըստ ինքեան այնքան մեծ է, որ նրա անունը անմահացնում է եւ յետագային պատկառանք ու զմայլանք առնում:

Թողնելով նրա տպագրված աշխատութիւններից շատ-շատերը՝ մի քանի տող նուիրենք նրա պատմա-աշխարհագրական գլուխ-գործոցներին, որոնց շնորհիւ նա առաւելագոյն հրաշակվեց իբրեւ գիտնական, այսինքն նրա «Արտաւան»-ին, «Ալարատ»-ին եւ «Սիւսական»-ին.— ինչ էն սրանք:

օրինակ էր: Նրա վրա չէին ազդում հասակը, ժամանակը և նոյն իսկ նրա ոչ շատ կատարեալ առողջութիւնը: Ամեն բան ընկճվում էր նրա անհուն ոգևորութեան, նրա զարմանալի տոկունութեան, նրա ուժեղ կամքի առաջ:

Այն դուրազագծութիւնը, որ նա ուներ դէպի ամեն բան, որ խօսում էր հայ երկրի մասին և հայ ժողովրդի խոհերի ու ստեղծագործութիւնների մասին, դարձրին նրան մի անձն, որ բնականաբար դարձաւ հայ աշխարհագրութեան, հայ պատմութեան և հայ ժողովրդագրութեան ներկայացուցիչ ոչ միայն արեւմտեան հայ գրականութեան մէջ, այլ և առհասարակ Եւրոպայի արեւելագիտական շրջաններում, որտեղ իբրեւ աշխարհագրագետ նա վայելում էր յարգելի հեղինակաւոր անուն:

Ալիշանը առաջիններից մէկն էր Վենետիկի միաբաններից, որ խօսեց հայ ժողովրդի հետ նրա ժամանակակից աշխարհագրութեան լեզուով և առաջիններից մէկը գործնականապէս ապացուցեց, որ աշխարհագրութեան պարզագոյնագէտը է իր մէջ զգացմունքներ և մտքեր արտայայտելու անհուն խորութիւն և գեղեցիկ ոճեր: Մեր աշխարհագրի զարգացման գործի մէջ նա իր գրեւորածներով և զլխաւորապէս երգերով դրեց հիմնական աղիւսներից մէկը,

Դեռ երիտասարդ հասակից, քառասունական թւականներից սկսած, Ղ. Ալիշանը իր գրական գրադուռը բացեց ժամանակ, ինչպէս ամեն մի պարագայում մարդ, ծանօթանում է իր հայրենի աշխարհին վերաբերեալ զանազան տեղեկութիւններին.— հին եւ նոր ժամանակի պատմական գործիչներ, գաւառներ, քաղաքներ, բերդեր, վանքեր, շէնքեր եւ աւերակների անուններ, հին եւ նոր ձեռագիրներ ու յիշատակարաններ, տեղագրական նկարագրութիւններ՝ լեռների եւ ձորերի, գետերի եւ լճերի, բայցերի ու հանքերի, հին դրամներ ու արձանագրութիւններ, նկարներ ու ճարտարապետութեան բեկորներ, վիճակագրութիւններ ու երկրաբանական հետազոտութիւններ... Այս եւ այսպիսի շատ տեղեկութիւնների պատահում էր նա իր կարգացած հարկաւոր ու հազարաւոր գրքերում ու լրագրիներում՝ հայերէն ու եւրոպական, նաեւ հին յունարէն, լատիներէն, արաբերէն լեզուներով, որոնց նա լաւ ծանօթ էր: Եւ նա զեռ քառասունական թւականներից սովորութիւն էր դարձրել՝ այս բազմատեսակ տեղեկութիւնները, կարգացած ժամանակ, հաւաքել ու դասաւորել ըստ դասերի եւ նիւթի: Տասնեակ տարիներ այս անհակադիմադրելի նա հաւաքում է անգիր քանակութեամբ նիւթեր Հայաստանի ամեն մի նահանգի մասին: Այնուհետեւ նա ձեռք է դրակում այս բազմատեսակ նիւթերը կարգի բերելու. կցկտուր, զանազան աղբիւրներից զաղված, երբեմն միմեանց հակասող, երբեմն առատ եւ երբեմն պակասաւոր ու կիսատ տեղեկութիւնները նա միացնում է իրար հետ, ստուգում, ուղղում, լրացնում, եւ ստացվում է մի շատ ստույգ գործ, որի մէջ հաւաքված են լինում Հայաստանի ամեն մի նահանգի առանձին նկարագրութիւնը եւ պատմութիւնը: Այս կերպով նա կազմում է Հայաստանի քան նահանգի ստորագրութիւնը:

որոնց վրա կանգնեց ներկայ մեր գրական շէնքը:

Այդ մեծ գործի, ոգևորութեան և աշխատանքի առաջ կանգնած՝ մեր հասարակութիւնը մատուցանում է իր խորին յարգանքը դէպի մեր գրական նահապետի թանկագին և անթաւառ յիշատակը: Մեր հասարակութիւնը պատրաստ է խոնարհվել արժանաւոր հոգեւորականի առաջ, երբ այդ հոգեւորականը այնպիսի գործի է, ինչպիսին էր Ալիշան: Մեր հասարակութիւնը իրան մտերիմ և հարազատ է ճանաչում դասնութեամբ օտար մի անձի, երբ նա գործում է ընդհանուր անդաստանում, խօսելով և գործելով մայր երկրի մասնագրութեան և բանասիրութեան համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏԱԳԻՐ ԿԱՐԳԱՎՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍ ՔԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ

Հրատարակված կողմանի քաղաքացիական մասի Կառավարչապետի կողմից 1901 թ.ի նոյեմբերի 15-ին պետական կարգը եւ հասարակական հաստատութիւնը պահպանելու համար միջոցների կանոնադրութեան 15-րդ յօդուածի հիման վրա:

Տուեա եկողներն են աներից դուրս գնացողներն իրան օտար կանաւթեան յայտնելու մասին:

Յօդ. 1

Պետական կարգը եւ հասարակական հաստատութիւնը պահպանելու նպատակով, Թիֆլիս քաղաքի անշարժ կալուածքների տէրերի, կամ նրանց պատասխանատու կառավարիչների վրա հետեւեալ պարտաւորութիւններն են դրվում:

4. 1) Կրեւնոցներ եւ կահաւորված սենեակներ պահողների վրա պարտաւորութիւն է դրվում յայտնել տեղական օստիկանական վարչութեան մասերում իրանց մօտ եկած կամ

գնացած տնկերի մասին նրա գալուց կամ գնալուց յետոյ 12 ժամվայ ընթացքում:

4. 2) Տանտէրերի կամ պատասխանատու կառավարիչների վրա, ուր այդպիսիները կան, իսկ արքունական եւ հասարակական շինութիւնների մէջ—անցագրիները մասը կառավարիչների վրա պարտաւորութիւն է դրվում յայտնել տեղական օստիկանական բաժնին իւրաքանչիւր եկող եւ գնացող անձի մասին 24 ժամվայ ընթացքում նրանց գալուց կամ գնալուց յետոյ:

Մանօթ. Եկողների կամ դուրս գնացողների մասին օստիկանական յայտնելու համար բլանկի ձեւը կորոչէ Թիֆլիսի նահանգապետը:

4. 3) Այն բոլոր անձինք, որոնք 2-դ կէտում յիշատակված շինութիւններում առանձին բնակարաններ ունեն (բնակարանի տէրերը) պարտաւոր են իմաց տալ տանտէրերը կամ պատասխանատու կառավարիչին, կամ անցագրային մասի կառավարիչին այն իւրաքանչիւր անձի մասին, որին թոյլ կը տրվի բնակվել բնակարանում կամ որը գնացած կը լինի այնտեղից նրա գալուց կամ գնալուց 18 ժամվայ ընթացքում:

4. 4) Հիւրանոցների, կահաւորված սենեակների տանտէրերի կամ պատասխանատու կառավարիչների վրա, իսկ արքունական եւ հասարակական շինութիւններում անցագրային մասի կառավարիչների վրա պարտաւորութիւն է դրվում ամենայն ճշգրտեամբ պահել բնակվողների ցուցակագրութեան համար որոշված գրքերը:

Մանօթ. Գրքերի ձեւը կորոչէ Թիֆլիսի նահանգապետը:

Տնեռի ներքին կարգի վրա հակելու մասին

Յօդ. 2

4. 1. Թիֆլիս քաղաքի տանտէրերի եւ ուրիշ անշարժ կալուածքների տէրերի կամ պատասխանատու կառավարիչների վրա պարտաւորութիւն է դրված անյապաղ յայտնել տեղական օստիկանական վարչութեանը:

ա) բոլոր արտակարգ եղելութիւնների մասին: Հայկայ չորրորդ շրջանին (Հայկից սկսված թւականութեան 4000-ամեակին), իսկ երրորդը՝ Միսթար Արքաճօր յիշատակին: Դժուար է, թէ իսկ մի ամբողջ բանասիրականի մէջ, թեւ ընդամենա, թէ ինչ նիւթեր են պարտնական այս պատկանելի եւ գեղեցիկ հասարակութիւնը. ինքը Ղեւնդ Ալիշանը «Սիւսական»-ի վրա գրել է «Համագրութիւն» բառը. եւ օտ կարծեմք ամենայնպէս բառն է՝ ցոյց տալու համար այս հատորների ինչութիւնը: Սրանք պարտնական են չափազանց ինչ՝ որ վերաբերում է Հայկական Կիլիկիային, Ալարատեան նահանգին եւ Սիւնիքին: Ինչ որ ասված է եղել այս նահանգների մասին ամենահին ժամանակից մինչեւ մեր օրերը օտարագրի եւ հայ հեղինակների կողմից. ինչ որ կարելի է եղել գտնել այդ տեղերում հետաքրքրական՝ բոլոր տեղ եւ գետի այս հատորներում: Այս երեք նահանգների բնութիւնը եւ մարդը մանրամասն ստորագրված են նրանց մէջ: Բնութեան տակ պէտք է հասկանալ այդ նահանգների աշխարհագրական դիրքը, մեծութիւնը, կլիմայական յատկութիւնները, մակերեսային կազմը, ջրերն ու ցամաքը, հանքային, բուսական եւ կենդանական հարստութիւնները: Իսկ մարդ ասելով պէտք է հասկանալ այդ գաւառների բնակչութեան քաղաքական, կրօնական, մտաւոր եւ կուլտուրական կենսանքը—այդ տեղերում իշխող թագաւորական եւ իշխանական տոհմերը, քաղաքական յեղափոխութիւնները, հոգեւոր նշանաւոր գործիչները, վանքերն ու եկեղեցիները, գրական շարժումներն ու նրանց ներկայացուցիչները, վաճառականութիւնը, ճարտարապետութիւնը, նկարչութիւնը, արհեստները, դրամները եւ այլն:

Բազմաթիւ նկարները—թուով 644, որոնցից 41-ը զանազան գոյներով,—մեծ մասամբ լուսանկարներից փորագրութեամբ պատրաստված

ներկայի տեսակետից, եւ մեր բանաստեղծը ողբերկի ու հառաչանքներից հիւսկած մի երգ է, որ փաթաթվում է հին, սուրբագիտ դերեզմաններին, կանգուն ու քանդված բերդերին, եկեղեցիներին։ Սիրում է նա այդ աւերակների յառուկ խորհրդաւորութիւնը—գիշերային պահ, լուսնի աղօտ լուս, բլրուկի մեղեդիները։ Այդպէս կարելի է ողբալ, այդպէս կարելի է հրնչեցնել ախուր, միջնափայլին այնքան համապատասխանող շեշտեր։ Հայ բաղմադարեան աւերակները հ. Ալիշանի պէս երգիչ գեռ չեն ունեցել...

Տեղեք ինչպէս է նահապետը իր օպիտակ մագերը փռում աւերակների վրա, ինչպիսի հոգեզմայլութեամբ խնկարկում այդ քարերի ու փոսերի վրա տարածված բնութեան։ Իր հառաչանքներն է նա խաղցնում հայրենի քաղաքների մէջ, իր համար գերեզման է որոնում այնտեղ։ Եւ որպիսի արտառուչ պարզութեամբ ու անկեղծութեամբ է դիմում նահապետը ինքն իրան եւ ասում.

Ճէ՛ խեղճ ծերուկ, զարկ ըզգործիդ ու զքեզ քարի,

Կամ թէ քաղէ՛ զաղիք սրտիդ որ քաշ թրթռի. Իստին կանչեն այրած լիւրերդ, լրտէ աշխարհի,

Գո զանգրտանք բռնեն լեռներ ծորեր հաւտար։

Բայց հ. Ալիշան միայն ողբացող ու յուսահատ չէ։ Նա ունի հաւատ, նա գիտէ, որ հայոց աշխարհիկը աւերակ չը պիտի մնայ։ Թող գնան կոխները, գնայ նախաձեռն, թող գայ սէրը, թող միանան օրերը. ահա այն ժամանակ նահապետը այլ եւս չի ողբայ հայոց աշխարհը, այլ երանի կը կարգայ։ Եւ նա կանչում է հայի հանճարը, հրաւիրում է նրան ապարդէզ գալ, գործել, վերակենդանացնել։

Տագէ՛ հայ հանճար, փայլէ՛ բերբ բոցեր, Նաման աղբի՛ր Թէ հալք չեն անցեր։

Ահա հ. Ալիշանի բանաստեղծութեան աշխարհը. ահա նրա արուեստը սրբոյցը, նրա դասանալը, նրա ուխտը։ Բայի բաղմաթիւ ինքնուրոյն բանաստեղծութիւններից, հ. Ալիշան յայտնի է իբրեւ թարգմանիչ բանաստեղծ։ Թարգմանիչ է Բայրընի «Լուսափայլ», Շիրիւրի «Ջանգալի» երգը, ամերիկական մի քանի բանաստեղծների գործերը, ինչպէս նաեւ թարգմանիչ է հայոց մի քանի ժողովրդական երգերը անգլիերէն լեզուով։

Սակայն բանաստեղծ Ալիշանին որոնելու համար կարիք չը կայ նրա գրած ոտանաւորները միայն տեսնել։ Ալիշանի բոլոր գրքերի մէջ է բանաստեղծ Ալիշանը։ Յիշենք նրա երկու հատոր «Յուշիկը Հայրենեաց Հայոց»։ Միեւնու երեք կտոր գրութեանն են ամփոփված այդ հատորների մէջ, ամենքն էլ նուրբ ված հայոց աշխարհին եւ հայոց պատմութեան։ Ամենքն էլ չքնաղ պատկերներ են. բանաստեղծութիւնը միայն է պատմութեան։ Ալիշանը պատմում է, եւ ինչպէս է պատմում Անցեալը կենդանւորում է, պատմութիւնը դառնում է ազգայնաւոր վրձին։ Նկարած պատկեր, այդտեղ օղ կայ, պայծառ լուսաւորութիւն կայ, այդտեղ կմախքներ եւ օտուներն չեն չրջում, այլ մարմին ու արիւն ունեցող մարդիկ։ Ոչ ոք մեղանում զեռ չէ կարողացել այդպէս պատմող դառնալ։ Որովհետեւ օղ օղ Ալիշան չէ։ Որքան անուն տեղեկութիւնների պաշար ունէր այդ մեծ խելքը, մեր պատմութեան քանի քանի կողմերն է նա լուսաբանել իր այդ ապշեցնող հմտութեամբ։ Յիշենք, որ ոչ մի դէպքում նրան չէր թողնում նահապետը բանաստեղծական արածարարութիւնը, եւ մենք կը հասկենանք թէ ինչու եւ ինչպէս «Յուշիկը» մեր աշխարհաբար գեղարուեստական գրականութեան ամենաաւելի գործերից մէկն է կազմում։

Լէօ

Հ. ԱԼԻՇԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I. Ինքնուրոյն

1. Նամուկութիւն Ս. Աղօղիսի. 1853.
2. Հայոց երգը Առավակա՛նք, անգլիերէն թարգմանված, հայերէն ընդգրով. 1853.
3. Աշխարհագրութիւն քաղաքական, ընդարձակ, պատկերազարդ, 12 քարտէսով. 1854.
4. Նոր Հայաստան, պատկերազարդ. 1855.
5. Նուագը, հինգ հատոր—Մանկունի, Բնուի, Հայրուհի, Տերուհի, Տերուհի. 1857—8., Բ. ապագրութիւն 1867 եւ 1881—7.
6. Հայկ եւ իւր չրջանն ու դարադարձն, ճառ ֆրանսերէն. 1859.
7. Համառօտ պատմութիւն դպրութեան հայոց, ճառ ֆրանսերէն. 1860.

8. Յոյցք Առաւօտ, նուէր տղայոց, 1866, Բ. ապ. 1885.
9. Բնագրութիւն Հայաստանի, ճառ ֆրանսերէն. 1869.
10. Յուշիկը հայրենեաց հայոց, 2 հատոր. 1869.
11. Նշմարեւ եւ նշխար Հայաստանի, լուսանկար պատկերներով. հայերէն—ֆրանսերէն—անգլիերէն. 3 մաս. 1870.
12. Ներսէս Շնորհալի եւ պարագայիւր. 1873.
13. Ընդ եղեւնեաւ. 1874.
14. Ոսկեգիրք, հրահանգ խոնարհութեան. 1877.
15. Աղօթք արեղայի. 1877.
16. Տեղագրութիւն Շիրակայ, պատկերազարդ, քարտէսով. 1881.
17. Երկրագիտութիւն հայկական, ճառ իտալերէն. 1881. (Թարգմանված է եւ հայերէն)։
18. Միսուն, համագրութիւն Հայկական կիրիկիոյ, պատկերազարդ, քարտէսով. 1885.
19. Այրարատ, ընաշխարհ Հայաստանեայց, պատկերազարդ, քարտէսով. 1880.
20. Միսական, տեղագրութիւն Սինեայ աշխարհի, պատկերազարդ, քարտէսով. 1893.
21. Հայրուհի, կամ հայկական բուսաբանութիւն, պատկերազարդ. 1895.
22. Հին հաւատք կամ հեթանոսական կրօնը հայոց. 1895.
23. Հայ-Վենետ, կամ յարնութիւնը Հայոց եւ Վենետոց. 1896.
24. Հայաստանով, 1901. (ապագրվում է)։
25. Արշալոյս քրիստոնէութեան հայոց. 1901 (ապագրվում է)։

II. Թարգմանութիւններ

26. Բերեքի Ռոտովի Հաւերդուհի, դիւցազնբա՛նք. 1858.
27. Պայր, Իտալիա. (Չայր Հարօլդի). 1860.
28. Շիրիւր, երգ ի Ջանգալ. 1871.
29. Քնար ամերիկեան, ծաղկաճաղ քերթուածը ամերիկեան բանաստեղծից. 1874.
30. Փայտանոս Պերգամոնի, Իմաց ի չարչարան ֆրիտտու. 1879.

III. Հրատարակութիւններ

31. Վարդան պատմիչ, ծանօթութիւններով. 1862.
32. Կիրակոս Փանձակեցի, ծանօթութիւններով. 1864.
33. Լաւրենա, թուղթ Արգարու, ծանօթութիւններով. 1868.
34. Գիրք վառարկոյ, հին թարգմանութիւն արաբերէնից, ծանօթութիւններով. 1876.
35. Սմբատ Պունդռտապլը, Անտիգ Անտիոն, նոր ֆրանսերէն թարգմանութիւն, հայերէնի հետ, ծանօթութիւններով. 1876.
36. Բենեդիկտոս, Սահման Բենեդիկտեան Վանաց, Ն. Լամբրոնացու թարգմանութիւն. լատիներէն թարգմանված, հայերէն ընդգրկում. 1880.
37. Կամենից, տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռուսիոյ. 1891.

IV. Անտիպ գրութեան

38. Հին Հայաստանի աշխարհագրութեան քարտէս.
39. Հայկարան, 12 ստուար հատոր (Հայաստանի 17 նահանգի ստորագրութիւնը)։
40. Դիւանական յարաբերութիւնը հայոց ընդ եւրոպական եկեղեցական եւ աշխարհական իշխանութիւնս.
41. Պատմական վկայաբանութիւն հայ նահատակաց։

Եւ ուրիշ բազմաթիւ յօդուածներ «ԲազմաՎէպում»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Իբրեւ պատասխան այն հեռագրին, որ Թիֆլիսի քաղաքապետի պաշտօնակատարը ուղարկել էր Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաւիչին, նրա առնանաւարկութեան ատեն առիթով, Նորին Բարձրութիւնը բարեհաճել է ուղարկել հետեւեալ հեռագիրը. «Գոհութեամբ յիշելով յոյն պէս այն օրերը, որ անց կացրի Թիֆլիսում, խոհորում եմ ձեզ ընդունել եւ հաղորդել քաղաքի ազգաբնակչութեան իմ անկեղծ շնորհակալութիւնը շնորհաւորութեան համար։ Միխայիլ»։

Երէկ, նոյն օրերի 16-ին, Կովկասեան կառավարչական օգնական գեներալ Ֆրեդէ ուղեւորվելով Պետերբուրգ, որտեղից կը վերադառնայ Թիֆլիս առաջիկայ ղեկավարներ ամսի սկզբներին։

Երէկ Վենետիկից ստացանք հետեւեալ հեռագիրը. «Հայր Ալիշան շուքով թաղվեց նոյն օրերի 23-ին (ն. ա.)։ Երեմեան»։

Դեկտեմբերի 1-ից սկսած Երեւանեան նահանգից եւ Կարսի շրջանից տնտեսներ ուղարկել զէպի միւս նահանգները վաճառելու համար կարելի է միայն Երեւան-Կարս երկաթուղով։ Ուրիշ ճանապարհներով անասուններ ուղարկելը իսպառ արգելվում է։

Շուտով լոյս կը տեսնի Հէնրիկ Սենկելիչի նոր գրութեանը, որ մի պատմական վէպ է «Փառքի դաշտում» վերնագրով։ Վէպի հերոսն է նշանաւոր Եւս Սորեսկի թագաւորը։

Պետերբուրգի կանանց ժանկավարժական կուսութիւնը, մայրաքաղաքի լրագրիների ասելով, կը վերածվի բարձրագոյն օւսումնարանի չորս տարեկ դասընթացով։ Այդ բարձրագոյն օւսումնարանում աւարտողները իրաւունք կը ստանան դասախօսելու իգական միջնակարգ օւսումնարանների բարձր դասարաններում։

ԲԱՅՈՒԹԻՑ մեզ գրում են. «Հայր Ալիշանի մահվան առիթով տեղիս Հայոց Մարդասիրական ընկերութեան վարչութիւնը Միխայիլեան միաբանութեան ուղարկեց հետեւեալ հեռագիրը. «Բազմալ Հայոց Մարդասիրական ընկերութեան վարչութիւնը նշանաւոր հայ գիտնական հայր Ալիշանի մահվան առիթով յայտնում է միաբանութեանը իր խորին ցաւակցութիւնը»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 10-ին Աղնուականների ժողովարանի դահլիճում կայացաւ Հայկական երկօրեայ ժողովարանի մի քանի անհանկներ շատ գեղեցիկ զարդարված էին, մանաւանդ «Խանութը», որտեղ ծախվում էր գինի։ Հիմնադիր էին տաղանդաւոր նկարիչ Սուրենեանցի մի քանի զեկօրագրիները, որոնք կախված էին Եսաթալայի ամբիօնի վերելից. լեռները, երկինքը, բուսականութիւնը այնքան ընկալան էին, այնքան գեղեցիկ, որ հասարակութիւնը հրացած էր։ Երեկոյեան համերգական բաժինը բազմազան էր։ Մասնականում էին Նորին Կայսերական Մեծութեան սուրբօրհնի Դոյինա եւ Կայսերական Թաւրոնի երգչուհի օր. Պապայան, պ. պ. Տարկալով եւ Դաւիթով. բացի դրանցից առաջանաւոր ջութակահար Նալբանդեան եւ Կայսերական Թաւրոնի խորմէյտար պ. Կազաչենկո եւ իր սիրողներ խումբը։ Սօրները կրկնվեցին մի քանի անգամ ժողովրդի բուռն ցանկութեամբ։ Խումբը, ղեկավարութեամբ պ. Կազաչենկոյի, շատ լաւ էր երգում. թոյլ էր Հալաբաբը։ Բայց պ. Կազաչենկոյի «Ջէյթուցոց մարը» վերջը այնպէս ոգեւորեց հասարակութեան, որ ժողովուրդը ինքը մասնակցեց խմբի երգեցողութեանը։ Լաւ էին եւ առիական պարերը՝ լեզգիկա, «ուղուն դարա», որ հիմնադիր պարեց երեկոյեան տանտիրուհի Տ. Աւանեսեան Վատ չէր եւ Լիսինեանի վերնօրհնը։ Ամենից հետաքրքրական էր բալերինաները. Պետիպիլի եւ Չիարլոնի լեզգիկա. դերասանուհիները ստացան ծաղկեայ փնջիլ թարմ ծաղիկներից։ Եւրօպական պարերը տեսեցին մինչեւ ժամը 4-ը։ Մուտքը շատ լաւ էր. դահլիճը լիքն էր անագին բազմութեամբ. խմիչքներից, ծրագրիներից, քաղցրեղեններից երեւի բաւական օգուտ կը մնայ։ Երեկոյեան ընդհանրապէս ուրախ անցաւ եւ ժողովուրդը հեռացաւ զոհ արտով, ինչպէս եւ միշտ»։

ԲԱՅՈՒԹԻՑ մեզ գրում են. «Աւելորդ է ասել, որ հայր Ալիշանի մահը զգալի ցաւ պատճառեց այստեղի հայ հասարակութեան, մանաւանդ հասարակութեան այն մասին, որը աւելի մօտից ծանօթ է նահապետի թանգարին գրութեանը հետ։ «Մշակ»-ի մէջ պատկանելի հօր մահվան գոյժը կարդալուն պէս, այստեղից հայ երիտասարդութիւնը մի հեռագիր ուղարկեց Միխայիլեան միաբանութեան հետեւեալ բովանդակութեամբ. «Բաժնումի հայ երիտասարդութիւնը ողբում է պաշտելի նահապետի մահը եւ յայտնում միաբանութեանը իր խորին ցաւակցութիւնը։ Մի եւ նոյն օրը մի հեռագիր ուղարկվեց նաեւ այստեղի կանանց «Տարաք» արհեստանոցի, իսկ հասարակութեան կողմից նոյնպէս սկսվեց պատրաստութիւն տեսնելի թէ հեռագիր ուղարկելու, եւ թէ մի արծաթէ պատկ պատրաստել տալու ու ուղարկելու Բացի այդ, եկող կիրակի, ամբիօն 18-ին, այստեղի ու Փիլիպի եկեղեցում հոգեւորականները կը կատարեն հոգեւորականներին հիշատակում»։

Հանգիստ տեղի կունենայ հայր Ալիշանի յիշատակին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

—Կ. Պօլսի լրագրիները տպագրել են մի երկար ցանկ Եւրօպա փախչողների, որոնց փախուստը տեղի է ունեցել մօտ օրերում։ Փախչողների թւում կան շատ օֆիցէրներ, քաղաքական գնդերի, բաւալիստների եւ բաւալիստների հրամանատարներ։

—Սուլթանը վերջապէս մի յաջող գտաւ իտալի-Բիֆառ փախչող փոխադէմ,—մեծ վիզիր նշանակված է Սայիդ-փաշայ, որ օտարաբար կոչվում է Գիւլիւլ փաշայ։ Նա արդէն մի քանի անգամ վարել է մեծ վիզիրի պաշտօնը։ Սայիդ փաշան ծնվել է 1835 թւին եւ շատ ջանքի հասակում մտել է պետական ծառայութեան մէջ։ Ֆուտա փաշայի հրամանատարութեան տակ նա մասնակցել է Սիրիայի ապստամբութեան ճնշմանը։ Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ նա շատ անգամ ծառայութեան մէջ եւ ապա նշանակվեց սուլթան Արդիւլ-Համիդի քարտուղար։ 1879 թւին Սայիդ-փաշայ ստացաւ ասպլին անգամ մեծ վիզիրի պաշտօնը։ 1895 թւին, հայկական կոտորածների ժամանակ, Սայիդ փաշան, երկուդ կրելով սուլթանի բարկութիւնից, փախաւ եւ ապաւինեց Կ. Պօլսի անգլիական դեսպանատնը, որտեղից սուլթանը հազիւ կարողացաւ դուրս հանել նրան դանապան խոտուռներով։ Այնուհետեւ Գիւլիւլ Սայիդը հեռացաւ քաղաքական ապարդէզից եւ ապրում էր օրպէս մասնաւոր անձն։ Նոր վիզիրի թշնամական վերաբերմունքը դէպի Անգլիան արդէն յայտնի է ամենքին։ «Temps» լրագրի ցանկում, նա կողմնակից է Բեֆօրմների, որոնք, նրա կարծիքով, անհրաժեշտ են երկրի վարչական կազմը բարելոցելու համար։

—«Kölnische Zeitung» լրագիրը հաղորդում է, թէ սուլթանը հրամայել է անյապաղ վերականգնել աշխատանքները Դարդանէլի մարտիկների վերանորոգելու համար։ Այս պատճառով արդէն Կ. Պօլսից պահանջված են Պալլիպօլի ուղարկելու կողակալի մի քանի ծանր թնգաւորներ։ Նշանաւոր չափով աւելացած է նոյնպէս թնգաւորային ուղարկութեանը պաշարը։ Այս միջոցները առանձին նշանակութեան են օտանում, եթէ ի նկատի առնենք այն տեղեկութիւնները, որոնք հաղորդում են, թէ տարածախնութիւնները Ֆրանսիայի եւ Թիւրքիայի մէջ նորից սուր կերպարանք են ստանում։

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

15 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Նոյեմբերի 15-ին Մոսկովայից ժամանեցին Մեծ Իշխան Սերգեյ Ալեքսանդրովի իր Ամուսնուհի Կեռն Նոյա Կայսերական Բարձրութիւնները գնացին Ցարսկոե-Սելօ։

ՎիէննԱ. Էրցհերցոգ Ֆրանց Ֆերդինանդ իր ամուսնուհի հետ ճանապարհ ընկաւ Բեռլին։ Էրցհերցոգը կը մասնակցէ այն օրօրացութեանը, որ կազմում է Բեռլինի պալատը։

Կիեւ. Հարաւարեւմտեան երկաթուղիների արհեստանոցների համար որոշված է կէս միլիոն ռուբլի։

ՏԱՄԱՐՎ. Նոյեմբերի 15-ին տեղի ունեցաւ ռուսաց յայտնի ողբերգու Ռեբակովի յիշատակի հանգիստաւոր տօնախմբութիւնը, որի նշխարաբը հանգչում է Տամբովում, նրա մահվան քսան եւ հինգ տարեկան տարեդարձի առիթով։

ՎԱՐՇԱՎԱ. Այստեղի շաքարագործարանաւորները կազմեցին նախադի՝ գործարաններից իւրաքանչիւրի համար ճակղեղային ցանցերի չափերը սահմանափակելու համար եւ միջնորդում են օրէնսդրական կարգով նրան հաստատելու մասին, խուսափելու համար շաքարի չափազանց արտադրութիւնից շաքարագործարանաւորների օինդիկատի որոշած նորմայի դէմ։

ԼՈՆԴՈՆ. «Times»-ին հաղորդում են Պէտերբուրգից. «Պատերազմական գործողութիւնների ընթացքում 70 բոլորական զորաբաժիններ, իւրաքանչիւրը 50-ից մինչեւ 400 մարդուց բաղկացած. դրանցից 26-ը Տրանսիւպալում են, երկաթուղուց դէպի հիւսիս Դելաւօյում է 7 զորաբաժիններ, թւով մօտաւորապէս 1,100 մարդ, Երկաթուղուց դէպի հարաւ 11 զորաբաժիններ, թւով 1600 մարդիկ եւ էլի 8 ուրիշներ, որոնք Տրանսիւպալի արեւմտեան մասում։ Կապի կողմերից յայտնվում են 10 զորաբաժիններ դէպի արեւմտեւ գլխաւոր երկաթուղիական գծից եւ 3-ը հիւսիս-արեւելեան շրջաններում։ Կիտլինի արտադրութեան տակ գտնվում են ընդամենը 45,000 մարդիկ։

ՊԱՐԻՉ: Սօցիալիստական եւ արժանապատիւ խմբերի բազմաթիւ անդամները յայտնում են պատգամաւորներին ժողովում, որ նրանք կը պաշտպանեն միջառնութիւնը յետադէմներին խնդիրներէն եւ ձայն կը տան փոխառութեան նախագծին երրորդ ընթերցանութեան ժամանակ:

Առեւտրա-արդիւնաբերական հանրապետական կոմիտէի այսօրվայ ժողովում վարչէկուսս ճառ արտասանեց, որի մէջ, ընդհանուրի հաւանութեամբ, յայտնեց, որ կառավարութիւնը ձգտում է իրազարծել հանրապետական կուսակցութեան բոլոր ֆրակցիաները միացնելու զաղափարը, որը պէտք է ամեն ջանք գործ դնել անելու բոլորը, որ նըպատում է նրանց միութեանը եւ հեռացնել բոլորը, ինչ որ անշատում է նրանց: Միջառնութիւնը, որ Գամբալայի եւ Ֆերրիի հետ միասին պաշտպանում է զաղափարական քաղաքականութիւնը եւ դեռ նորերս քիչ մնաց, որ խիստ չափազանց էր պաշտպանում այդ զաղափարը, որով երկուք յարուցեց, թէ նա կարող էր մի յայտնի աստիճան պաշտպանել իմպէրիալիզմի զաղափարը: (Միժող): «Բայց, — ասեց վերջում միջառնութիւնը, — հանդիսաւ կայքէջ, մենք չենք մտածում իմպէրիալիզմի մասին թէ դուրսը եւ թէ ներսը, խօսքը այժմ ոչ թէ զաղափարական կառավարչները ընդարձակելու մասին է, բայց նրանց պահպանութեան եւ կարգաւորութեան մասին: Մեր երազն է, որ Ֆրանսիան ամէն ոչ թէ իր տարածութեամբ, այլ առեւտրական եւ սօցիալական առաջադիմութեամբ:

ԼՕՆԴՕՆ: Լանսդուն մի ճառ արտասանեց Դարլինգտոնում, որի մէջ ներդրութիւն խնդրեց, որ չը կարողացաւ ցերեկով այցելել ունիոնիստներին ժողովը: Նա ուշացաւ Լոնդոնում, որովհետեւ ցանկանում էր յարգանքի վերջին պարաքը մատուցանել հանգուցեալ մեծ դիպլոմատ Հալֆէլլին, գերմանական կայսրութեան ներկայացուցչին, մի ժողովուրդի յարգում էին, ասանելով նրա մէջ մեծ բարեկամ ազգի ներկայացուցչին: Հոնտորը ապա ակնարկեց այն տպաւորութեան վրա, որ գործել է Ձեմբերլէնի ճառը, այդ ճառի մէջ նա մինչեւ անգամ վիրաւորանքի ակնարկ չէ տեսնում եւ մի քանի անգամ թոյլ չէ տալիս ենթադրելու, որ նախամտածած իրեն այդ բանը: Ապա Լանսդուն մատնացոյց է անում Անգլիայի յարաբերութիւնների վրա պետութիւնների հետ, որոնք կատարելապէս բարեկամական են: Միայնակ բարդութիւններ անդի կունենան առաջիկայ առեւտրական բանակցութիւնների առիթով Միացեալ-Նահանգների հետ եւ Նիկարագուա չրանցքի առիթով: Աֆրիկական արշաւանքը աշող է ընթանում եւ Կէմբէլի բացատրութիւնները ճիշդ չեն:

ՊԱՐԻՉ: Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնայի ծննդան օրվայ առիթով այսօր ռուսաց զեսպանատան եկեղեցու մէջ հանդիսաւոր ժամատաղութիւն կատարվեց, որին ներկայ էին զեսպան իշխան Ուրուսով զեսպանութեան բոլոր անդամներին հետ եւ ռուսաց կոյսիայի աչքի ընկնող ներկայացուցիչները:

ՊԵՏԵՐԲԱՐԴ: Նոյեմբերի 13-ին Պետերբուրգ գալուց յետոյ, եսպանական պետական գործիչ մարկիզ Իսո այցելեց արտաքին գործերի մինիստրին, որը նոյն օրն եւ եթ փոխայցելութիւն գործեց նրան: Հինգշաբթի մարկիզ Իսո առանձին ունկնդրութեան ընդունվեց Քաղաքաւոր Կայսրի մօտ, իսկ երեկոյան ի պառիւ նրա արտաքին գործերի մինիստրի մօտ տեղի ունեցաւ հանդիմաւոր ճաշ, որին ներկայ էին մարկիզին ուղեկցող Յուզակի, արտաքին գործերի մինիստրի նախկին օգնական Եսպանիայում, եսպանական միտինիստ ամբողջ կազմութեամբ, կայսրութեան բարձրաստիճան պաշտօնեաներ եւ արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնեաները:

Նոյեմբերի 15-ին Հեռու Արեւելքից վերադարձաւ 2-րդ զվարդիական արագածիգ բատարէան Դիմաւորուսը շատ սրտազին եւ հանդիսաւոր էր:

ԽՈՐԱՊԵՐ՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՐ
Հրատարակիչներ՝ ԲԱՅՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱԼԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՆԱԶԱՐՈՍ ԱՆՅԵԱՆՅԻ
հասցեն.— Թիֆլիս, Կաթողիկոսական փողոց, տ. Զուրաբովի, համար 15. 2—3

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱՏՐՈՆ
Երկուշաբթի, Նոյեմբերի 19-ին
Հայ գերաստական գրադատիկ ընկերութիւնը Կը ներկայացնէ

ՀԱՄԼԵՏ
Ողբերգութիւն 10 պատկերով, հեղ. Շէքսպիրի, թարգ. Յ. Մ. Մառնիսանի
ՀԱՄԼԵՏԻ ԴԵՐԸ ԿԸ ԿԱՏԱՐԷ Տ. ՍԻՐԱՆՈՅԵ
Մասնակցում են. օր. Գուրգենյան, տ. Մայսուրեան, Սիւրանոյ, Փառանձեմ. պ. պ. Արեւիան, Արիստեան, Աղայեան, Աւետեան, Բերայեան, Չարիֆեան, Պետրոսեան, Ստեփանեան, Վրոյր, Ռշտունի եւ ուրիշները:
Սկիզբը ճիշդ ժամը 8-ին:
Տեղերի գները բէնէֆիտի են: 1—2

Կարա-Մուրզան
խնդրում է խմբի անդամներին՝ տիկիններին, օրիորդներին եւ պարսներին՝ շնորհ բերել Աւետեան ժողովրդական թատրոնը, կիրակի, ամսիս 18-ին, առաւօտեան ժամը 11-ին, մի բաժանմունք համերգ երգելու համար: 2—2

ԵՐԿՐԱՅԱՓ-ԻՆՏԵՆՏ
Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (НИВЕЛИРОВАННЫЕ) եւ այլ տեսակի գեօդէզիական աշխատութիւններ՝ շուր մասալարարելու, կանալիզացիայի, ռոտման, ճահիճների ցածրագոյնելու, անասունների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների շինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կառավարչների կարգաւորութեան յատակագիծ վրա գրահանաւորական (ОПЕЧАТОЧНЫЙ СБОР) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագիծ հաստատելը օրէնսդրական կարգով եւ այլն:
ԲԱՀՈՒ, Վերացօգնալ Եմբերը Իւրանոյ, կամ Թիֆլիս՝ Ավետեան փողոց, Շահրուշազեանի տուն, № 59, բաղկում: 28—100

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ
ԴՕԿՏՈՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
Նորագոյն ապարանքով եւ էլեկտրական մեքենաներով, մասնաւորապէս
ԲԳԻ, ԳԹԻ, ԱԿԱՆՔԻ ԵՒ ԿՐԾԻԻ ՀԻՒԱՆ-ԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
СЕРГІЕВСКАЯ УЛ., Д. 12.

ՈՍԿԵԳՈՅԵՆ ԵՒ ԱՆՈՒՇԱՀՈՏ
ՄԵՂՐ

Ա. ՄԻԹԱՐԵԱՆԻ ՄԵՂՐԱՆՈՅԵՏ
Մախվում է Լեռնաժողովարան փողոցում, Տէր-Միքայէլեանի № 3 տանը, Արաւ-Արաղակայա հրապարակի մօտ, մուտքը դաւթից. բարձրանալ ձախակողմեան վերնայարկը:
Մեղրի պուղը—Ց բուրբի, ֆունտը—25 կօպէկ:

ԼՈՂՈՒՄԵԱՆ ՄԶՄԱԿԵԱՆԻ
«Մօցի», Սեղանի, «Պատի» եւ «Армянский Календарь»
1902. ՕՐԱՅՈՑՅՆԵՐԸ
Աւելի չընդացած եւ հարստացած
«ՊԱՏԻՆԸ» 40 40Գ.
Միւսները ամբողջական գներով
Հասցեն՝ Թիֆլիս, Մակար Զմիկեան (ե. հ.) 8—15

Ա.ՏԱՄԱՐՈՅԵՐ
Լեռն Կարապետեան
Դարձանում է ամսամբեր, շինում է պլոմբներ, ոսկէ պատկերներ արձանների վրա նստացնելու եւ կեղծ աստամբեր ոսկէ եւ կոտլուկէ պլատինայի վրա:
Ընդունում է հիւանդներ, ժամը 9-ից առաւօտեան մինչեւ ժամը 7 երեկոյան:
Սօցիալական փողոցի վրա, տուն Միրզոե-վի № 6. 18—50

„ՎՏԱԿ“ ժողովածուն լոյս տեսաւ եւ վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական գրա-վաճառանոցում: Գինն է 1 ր. 50 կ., փառա-կազմ՝ 1 ր. 90 կ., 2 ր., 2 ր. 25 կ.:
Նոյն տեղը ստացվել են եւ հետեւեալ նոր գրքերը:
ԳԻՐԳ ԹՂԹՈՑ. Մասնաւորութիւն նախ-նայ, Թ. 1901 թ., Գ. 1 ր. 50 կ.:
Ս. ԷԶՄԻԱՆԱՅ ՕՐԱՅՈՑՅ 1902 թ. Գ. 20 կ.
Գրաւաճառների եւ գումարով գնողներին ղրջումն է լինում:
Դիմել՝ Тифлисъ, въ Центральную книжную торговлю. (շ.) 9—10

Թիֆլիսի Գործակալատարների Փոխադարձ Օգնութեան

ՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՎԱՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
պատիւ ունի յայտնելու ի գիտութիւն Թիֆլիսի գործակալատար համայնքի՝ որ կիրակի օր, օրն ՆՈՅՆՄԱՐԵՐԻ 18-ին, ցերեկվայ ժամը 11-ին, Թիֆլիսի քաղաքային խորհրդէ դասիճում նշա-նակված է գործակալատարների ընդհանուր ժողով, ընկերութեան վարչութիւնը կազմակերպե-լու եւ մի քանի կարեւոր խնդիրներ ըննելու համար:
Մինչեւ ժողովի օրը՝ ընկերութեան անդամ գրվել ցանկացողները կարող են դիմել հետեւեալ հիմնադիր անդամներին.— 1) Թիֆլիսի Փոխադարձ վարկի ընկերութեան գլխաւոր հաշ-ւապահ Վլադիմիր Լազարովիչ Պատկովին: 2) Թիֆլիսի Առեւտրական Բանկի գլխաւոր հաշ-ւապահ Ալէքսանդր Գալանթապեանցին: 3) Սեբէյի Գերատիմի Կաֆեանցին, իր խանութում: 4) Մեղրի Պետրովիչ Սինիլիովին «Російск. Обществ. Транспорт.»-ի գրասենյակում, Դվորցո-վայա փողոց, տուն Սարգիսի: 5) Դաւիթ Իսայիչ Առաքելեանցին, Փեթրիկոյ բնադ, ճակով-բանի խանութ: 6) Տիգրան իջա-Թումանեանցին, նոյն տեղ: 7) Արշակ Թեւեանին, Դվորցո-վայա փողոց, խանութ Նըր. Ալլիմզի: 8) Ստեփան Խաչիկեանին, Արշիլանովի Ալլիկեանական ընկերութեան գլխաւոր հաշւապահ:
(շ. կ. ե. հ. շ. կ.) 5—6

Ստացել ենք Մօսկվայի յայտնի առեւտրական տուն
Ա. Ե. Բ. ՐՕՂԵՆԿՎՈՂԵՐ
ՄԵԾ ԳԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՏՂԱՄԱՐԿԱՆՑ ԵՒ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ
Թէ ապրանքի յատկութեան եւ թէ գների էժանութեան կողմից՝ ոչ ոք չէ կարող մրցել ծան-կացողները կարող են անձամբ համոզվել:
Ընդունում ենք նաեւ ամեն տեսակ ՊԱՏՆԵՐՆԵՐ, արտասանների եւ Ռուսաստանի կտորնե-րից (матерія), Դիմել:
ԵՂԲ. Վ. ԵՒ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻՆ
Գօլովինսկի պրօսպեկտի վրա, առաջին գիմնադրայի հանդէպ: 5—10

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
ШОКОЛАДЪ
СІУ
ФАБР. С. СІУ И К. МОСКВА.

ԲԺԻՇԿ ԲՈՒԴՈՒՆԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՀԵՍԸ
Յանձնված է Թիֆլիսում Կենտրոնական գրաւաճառանոցին,
ուր հրաւիրվում են գիմել ցանկացողները
ՆՈՐԵՐՍ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
«Մարմնամարդութիւն» (25 պատկերով)—գինն է 20 կօպ., «Մարմնամարդութեան աղիւսակ-պատկերներ»—գ. 10 կ., «Ժառանգականութիւն եւ դատարարականութիւն»—գ. 15 կ. եւ «Ման-կավարժական համառօտ զրոյցներ»—գ. 15 կ. նաեւ միւս աշխատութիւնները.—«Առողջ հոգին առողջ մարմնի մէջ»—գ. 10 կ., «Գեղձախտ—զօլօտուխտ»—գ. 10 կ., «Ո՞վ է յանցաւորը»—գ. 15 կ., «Սեֆիրա»—10 կօպ., «Մեր նեարդերը»—10 կ. եւ «Կենդանական ախտեր»—գ. 5 կօպ.:
Գրաւաճառներին եւ գումարով գնողներին ղրջումն է լինում:
Դիմել՝ Въ Тифлисъ. Въ Центральную книжную торговлю. 10—10

Կ Օ Ն Ֆ Ե Մ Ի Ե Ղ Շ Օ Կ Օ Ղ Մ Դ Ի
Գ Ո Ր Ծ Մ Ր Մ Ա
„Փ. Ն. ՓՐԻԴՈՆԵԱՆ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Առաջարկում է թարմ կարամէլ մրգեղէնից, մօնպանսէ, մարմէլադ, պաստիլա, զեֆիր եւ այլն:
Պատուէրներով դիմել գործարան. Պավ-լովսկայա փողոց, սեփական տուն, տէլեֆօն № 362.
Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէլյանով, եղբ. Հէջուբեանների տանը, տէլեֆօն № 772.
Մեր ապրանքները ծախվում են բոլոր կոյսիական խանութներում:
Բազուկ եւ Բազուկի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարեանց, Մի-բայիլեան փող., տ. Աշումեանի:
91—100

